



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19 մարտի 2018 թվականի N 17 - Ա

Ուղեգրող ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ԹԻՎ 10-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 457-Ա հրամանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ ե մ .

1. Տավուշի մարզի պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական ընկերություններում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրելու համար ըստ տարածաշրջանների ստեղծել մշտական գործող հանձնաժողովներ՝ /այսուհետ՝ ուղեգրող հանձնաժողով/ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովներին՝

1/ գործունեությունը կազմակերպել Տավուշի մարզում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող պոլիկլինիկական կազմակերպություններում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովներին ՀՀ առողջապահության նախարարի կողմից յուրաքանչյուր տարվա համար հատկացված քվոտաների քանակի և առավելագույն գումարի սահմաններում:

2/ սահմանված կարգով եռամսյակային պարբերականությամբ ներկայացնել հաշվետվություն ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ Տավուշի մարզպետարան:

3/ աշխատանքները կազմակերպել և որոշումները կայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի թիվ 457-Ա հրամանով սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2015 թվականի ապրիլի 2-ի թիվ 10-Ա կարգադրությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ